**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, գ. Սարահարթ, Հեռ. (094)077616 ,

06. *օգոստոս. 2014թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Կից՝ Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Սարահարթ համայնքի ղեկավարի 29-32 որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՎԱՍԻԼ ՓԻԼՈՅԱՆ**

*Կատ.* '

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐԱՀԱՐԹԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

«08» 08. 2014թ.

# ՈՐՈՇՈՒՄ N 29

Սարահարթի համայնքի 2014 թվականի գյուղական բյուջեից դրամական օժանդակություն տալու մասին:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հ.Հ. օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների՝ Սարահարթ համայնքի բնակիչ՝ Ջեմ Չաուշյանին գյուղական բյուջեի (4729 հոդված) այլ օժանդակությունների հոդվածից հատկացնել 60 000 (վաթսուն հազար) դրամ:

Գյուղապետ Կ. Գրիգորյան

ՍԱՐԱՀԱՐԹԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ 068

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«02» 09 2014 թվականի N 30

### ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ 06-097-0016-0004 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, , Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքով, Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 22/03/1993թ թիվ 1 որոշմամբ, ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրենքի ուժով 06-097-0016-0004 ծածկագրի տակ գտնվող 0.17077 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել Հրահատ Զավենի Մաղանցյանի / ծնվ. 1959թ / , Գրետա Կարապետի Հակոբյանի / ծնվ. 1962թ / , Հայարփի Հրահատի Մաղանցյանի / ծնվ. 1984թ / , Զավեն Հրահատի Մաղանցյանի / ծնվ. 1986թ / , Հայկուհի Հրահատի Մաղանցյանի / ծնվ. 1992թ / ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը, որից ՝ 0.12 հա փաստացի հատկացված, 0.05077 օրենքի ուժով:

2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ / չի առաջացնում սերվիտուտ:
3. Վերականգնել և ճանաչել 0.17077 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1980-1990թթ կառուցված 142.1քմ բնակելի տան և 16.64 քմ կիսակառույց հավարնի նկատմամբ Հրահատ Զավենի Մաղանցյանի / ծնվ. 1959թ / , Գրետա Կարապետի Հակոբյանի / ծնվ. 1962թ / , Հայարփի Հրահատի Մաղանցյանի / ծնվ. 1984թ / , Զավեն Հրահատի Մաղանցյանի / ծնվ. 1986թ / , Հայկուհի Հրահատի Մաղանցյանի / ծնվ. 1992թ / ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը

4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Հողամասի վրա առկա է նաև շարժական տնակ:
6. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Սարահարթ համայնք, 3 փողոց, 18 բնակելի տուն:

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐԱՀԱՐԹԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

«04» 09 . 2014թ.

ՈՐՈՇՈՒՄ 31

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ելնելով ՀՀ կառավարության 29.12.2005 թվ թիվ 2387-Ն որոշման պահանջներից

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Լոռու մարզի Սարահարթ համայնքում 06-092-015-13 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքը հասցեավորել 6-րդ փողոց թիվ 15

ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ Վ. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐԱՀԱՐԹԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

«19» 09 . 2014թ.

## ՈՐՈՇՈՒՄ 32

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ելնելով ՀՀ կառավարության 29.12.2005 թվ թիվ 2387-Ն որոշման պահանջներից

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Լոռու մարզի Սարահարթ համայնքում 06-097-0023-0013 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքը հասցեավորել 10-րդ փող. 1-ին նրբ. թիվ 5

ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ Վ. Փիլոյան